գերեզմանաքարեր, որ դռներու առջև տարածուած էին իբրև նստարան. արձանագրութիւններ շարունակ շրջուելով մաշուած էին, որպէս և խաչի նշաններն։

Ստուգեցինք որ մեր տան տէրը տան հիմերը փորելու միջոցին մեծ գումար մի ստակ գտած և հարստացած է, նորա հետևած են իւր գիւղացիք իրենց տան հիմը և տանց շուրջը պեղած են, սակայն միայն գերեզմանաքարեր, խաչարձաններ, կաւէ անօթներ և սրբատաշ քար գտած են։ Այր գտնուած են 3 հատ հին զանգակներ, վերան անընթեռնելի գրեր։

Մեր նպատակն էր բերդը տեսնել, եօթ ընկերով բարձրացանք 25 վայրկեանի չափ հարաւ արևմտեան զառիվեր ուղղութիւն մի բռնելով. ժայռերէ փշրուած քարակոյտներու վերայէն էր շարունակ մեր ճանապարհը։

Պատահեցանք մի կոփածոյ խրամի, որ ժայռի գագաթէն սկսած երկարացած էր դէպի արևմտեան հիւսիս, տակաւ առ տակաւ շեղուած էր արևմտեան հարաւ բերդի ներքևի ողին վրայ ընդհատուած, որով ընթերցողը կարող է զուշակել թէ հարաւային կողմն անհպելի էր՝ Շեռեան խիստ խոր անդունդ մի կազմած լինելուն։

Բերդի արտաքին դռան մօտ կանգ առինք, մեր առջևը բարձրացած է (հարաւ) յարևմուտս սպառուած Արուղէթայ բլուրին վերջին գագաթն, որ ժայռէ կազմուած է։

Բերդս ունի երկու պարիսպ, արտաքին և ներքին, արտաքին պարսպի մեծ մասն փլած է, որ և պատած էր բլուրի հիւսիսային երեսն։

Որպէս այլ վայրեր, նոյնպէս գիւղացիք պեղած են արտաքին դռան հիմերն գանձ գտնելու յուսով, որով